



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

11.01.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/124

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 12.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 12.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունն ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որը հաստատվել է գնահատող հանննաժողովի 2018թ. դեկտեմբերի 7-ի թիվ 1 որոշմամբ, որի հրավերի թվով հինգ չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր:

Հրավերի թիվ 6 հավելված՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի թիվ 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցում հրավերում առկա՝ թվով հինգ բոլոր ապրանքների համար «տեխնիկական բնութագիր» սյունակում գրված են միևնույն՝ «Ապրանքներու ախտո Է

ունենան. 1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):» պահանջները:

Այդ պահանջները խտրական են, սահմանափակում են ԵԱՏՄ արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ աճուրդին, քանի որ ԵԱՏՄ արտադրողների ապրանքների համար պարտադիր պայմանը ԵԱՏՄ Մաքսային Միության Պետական գրանցման վկայականի առկայության պահանջն է, ինչը բացակայում է Պատվիրատուի պահանջների ցանկում, դրանով իսկ չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարությունը և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2018թ. դեկտեմբերի 7-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ «Ախտահանիչ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերը:

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրում առկա «Ապրանքները պետք է ունենան. 1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):» պահանջները՝ չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պահանջներին, չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության 27.12.2018թ. թիվ ԴՎԱ/5317 գրության «Խաչպար» ՍՊԸ-ն 08.01.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

«1) Գրության մեջ հղումներ են արված ՀՀ «Դեղերի մասին» նախկին օրենքին, ՀՀ Կառավարության 25.04.2001թ. թիվ 347-րդ որոշմանը, ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-րդ որոշմանը, որոնք բոլորն էլ այսօրվա դրությամբ ճանաչված են ուժը կորցրած, դադարեցրել են իրենց գոյությունը, և ոչ մի իրավական նշանակություն չունեն:

2) Գրության 2-րդ պարբերությունում հղում է արվում ՀՀ «Դեղերի մասին» այժմ գործող Օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետին, որը վերաբերվում է ՀՀ Կառավարության կողմից «...նոր, վերարտադրված դեղերի, կենսաբանական դեղերի, անասնաբուժական դեղերի, բուսական դեղերի, մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝....» հաստատելուն, որոնք ոչ մի կապ չունեն «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի հետ, քանի որ մեր բողոքը վերաբերվում է «Ախտահանիչ նյութեր»-ին, այլ ոչ թե դեղերին:

3) Համաձայն այսօր գործող ՀՀ «Դեղերի մասին» 17.05.2016թ. ընդունված թիվ ՀՕ-86-Ն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանման՝ դեղ է համարվում այն միջոցը, «....որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ՝ հիվանդությունը ախտորոշելու նպատակով.»: Այս սահմանումներից և ոչ մեկը առկա չէ ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀՊՆՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրերում, ինչը նրանց իրավունք կվերապահեր հղում կատարելու ՀՀ «Դեղերի մասին» օրենքին: ՀՀ պաշտպանության նախարարության հրավերում պահանջվում են «Ախտահանիչ նյութեր», որոնք կիրառվում են բժշկական իրերի մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման մշակման և մանրէազերծման նպատակներով, ինչպես նաև բուժանձնակազմի ձեռքերի ախտահանման և հիգիենիկ մշակման համար:

4) Համաձայն «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ (ԱՏԳ ԱԱ)»-ի, դեղամիջոցները դասակարգվում են «Դեղագործական

արտադրանք» անվանումը կրող թիվ 30-րդ խմբի թիվ 3003 և 3004 դիրքերի 10 000-ից մինչև 90 000 ենթադիրքերում:

5) Համաձայն «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ (ԱՏԳ ԱԱ)»-ի, ախտահանիչ միջոցները դասակարգվում են «Այլ քիմիական ապրանքներ» անվանումը կրող թիվ 38-րդ խմբի թիվ 3808 դիրքի 3808 94-ից մինչև 3808 99 900 ենթադիրքերում:

6) ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով պահանջվում են «Ախտահանիչ նյութեր», որոնց համար ներկա պահին ՀՀ-ում իսկապես առկա չեն պետական գրանցման և դրա համար անհրաժեշտ համապատասխան փորձաքննությունների պահանջներ (ինչպես դեղերի համար), նրանց չի տրվում գրանցման հավաստագիր (ինչպես տրվում է դեղերին) և նրանք չունեն պետական գրանցման գրանցամատյան (ինչը առկա է դեղերի պարագայում): «Ախտահանիչ նյութեր»-ի շրջանառության՝ ստեղծման, արտադրության, ներմուծման, արտահանման, իրացման, կիրառման համար թույլտվության փաստաթուղթ է հանդիսանում մաքսային հայտարարագիրը, որը ԵԱՏՄ, ինչպես նաև Մաքսային Միության Պայմանագրի անդամ հանդիսացող երկրներում (այդ թվում՝ նաև ՀՀ-ում) գործող շրջանառության սուբյեկտներին մաքսային մարմինների կողմից տրամադրելու համար՝ բացի տվյալ ապրանքի ձեռքբերման հաշիվ-ապրանքագրից, պահանջվում են միայն «Ախտահանիչ նյութեր»-ի ԵԱՏՄ «Պետական գրանցման վկայական» և «Համապատասխանության դեկլարացիա» փաստաթղթերի առկայությունը, որոնց առկայության մասին պահանջը ընդհանրապես բացակայում է ՀՀ պաշտպանության նախարարության հրավերի թվով 5 ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերում:

7) ՀՀ-ում վերոգրյալ փաստաթղթերից բացի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բոլոր բուժկանխարգելիչ կազմակերպություններում (անկախ իրենց կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական պատկանելիությունից) բժշկական իրերի մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման մշակման և մանրէազերծման նպատակներով «Ախտահանիչ նյութեր»-ի կիրառման թույլատվության համար պահանջվում է նաև ՀՀ ԱՆ 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի 1-ին և 20-րդ կետերով սահմանված՝ մեթոդական հայերեն ուղեցույցի առկայությունը: Այս հրամանի պահանջներին համապատասխանող՝ ախտահանիչ միջոցների կիրառման՝ ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգների առկայության մասին պահանջը, նույնպես

ընդհանրապես բացակայում է ՀՀ պաշտպանության նախարարության հրավերի թվով 5 ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերում:

«Խաչպար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարելու որոշում:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն Սմբատ Բալասանյանը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.12.2018թ. թիվ ԴՎԱ/5317 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ 11.12.2018թ. հրապարակվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ախտահանիչ նյութերի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգի հրավեր (այսուհետ՝ նաև հրավեր): Հաշվի առնելով այն փաստերը, որ ներկայումս որևէ ախտահանիչ նյութ ՀՀ-ում պետական գրանցում չունի և ներկրման ժամանակ դրանք չեն անցել գրանցման համար սահմանված համապատասխան փորձաքննություն, պահանջվող ախտահանիչ նյութերի կիրառման ոլորտը, ախտահանիչ նյութերի համարժեքությունը դեղերի հետ (ՀՀ «Դեղերի մասին» նախկին օրենքով սահմանված էր, որ դեղեր են համարվում նաև՝ 1.հականեխիչ միջոցները (անտիսեպտիկներ)՝ վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հարուցիչները, ինչպես նաև դրանց փոխանցողներին ոչնչացնող կամ վերացնող միջոցները, 2.վարակազերծիչ միջոցները՝ հակամանրէային ակտիվությամբ օժտված նյութերը, որոնք օգտագործվում են բժշկական նշանակության առարկաների վարակազերծման համար), ինչպես նաև որակը, արդյունավետությունը և անվտանգությունը ապահովելու նպատակով՝ հրավերի տեխնիկական բնութագրերով սահմանվել է պահանջ, համաձայն որի ապրանքները պետք է ունենան Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

Վերոնշյալ պահանջի սահմանման համար հիմք են հանդիսացել՝

«Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսանմանակների, դեղերի համակցությունների, հոմեոպատային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակարույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

«Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.04.2001թ. N 347 որոշման 11-րդ կետը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման նպատակով կատարվող փորձաքննության առավելագույն տևողությունը 180 օր է, բացառությամբ Եվրոպական միության լիիրավ անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ Ճապոնիայում գրանցված դեղերի, որոնց փորձաքննությունն իրականացվում է առավելագույնը 30 օրվա ընթացքում, պարզեցված կարգով՝ առանց լաբորատոր փորձաքննության:

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման 2.1 կետը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար կատարվող գնումների պլանում կարող են ընդգրկվել նաև «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք ունեն արտադրողի

երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր և Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում և (կամ) գրանցված են Եվրոպական միության անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կամ Ճապոնիայում:

Վերոնշյալ իրավական ակտերից հետևում է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար ախտահանիչ նյութերի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերում ախտահանիչ նյութերի Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի առկայության պահանջը հիմնավորված է, քանի որ «Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետը, որի համաձայն ախտահանիչ նյութերը նույնականացվում են դեղերի հետ, իսկ արդեն «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման 2.1 կետի համաձայն գնումների պլանում ընդգրկված, Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղերը պետք է գրանցված լինեն Եվրոպական միության անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կամ Ճապոնիայում:

Այսինքն՝ նաև ախտահանիչ նյութերի համար նման պահանջի առկայությունը կարող է երաշխավորել ախտահանիչ նյութերի որակը, արդյունավետությունը և անվտանգությունը:

Ի լրումն 27.12.2018թ. գրության 10.01.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության գրությունում նշված Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.04.2001թ. N 347 որոշման 11-րդ և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման 2.1 կետերը այսօրվա դրությամբ ուժը կորցրած չեն ճանաչվել և գործում են:

Հաշվի առնելով այն փաստը, որ ներկայումս որևէ ախտահանիչ նյութ ՀՀ-ում պետական գրանցում չունի և դրանք չեն անցել գրանցման համար սահմանված

համապատասխան փորձաքննություն, պահանջվող ախտահանիչ նյութերի կիրառման ոլորտը (կիրառվելու են ոչ թե տարածքների, սանհանգույցների ախտահանման, այլ բժշկության մեջ՝ բժշկական գործիքների ախտահանման, նախամանրէազերծման մշակման, մանրէազերծման համար՝ հիվանդությունները կանխարգելելու նպատակով, անմիջականորեն առնչվում են մարդու առողջության հետ), ախտահանիչ նյութերի համարժեքությունը դեղերի հետ՝ որակը, արդյունավետությունը և անվտանգությունը ապահովելու նպատակով՝ հրավերի տեխնիկական բնութագրերով սահմանվել է պահանջ, համաձայն որի ապրանքները պետք է ունենան Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

«Խաչպար» ՍՊԸ-ի լրացուցիչ գրության 2-րդ կետում նշված հիմնավորումը տեղին չէ, քանի որ՝ «Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետը վերաբերում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԷԱՃԱՊԶԲ 9/17 ծածկագրով մրցույթի կապակցությամբ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքին (չափաբաժիններում ներառված են նաև մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկներ՝ մասնավորապես 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինները): Համաձայն այդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման; վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսանմանակների, դեղերի համակցությունների, հոմեոպատային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

«Խաչպար» ՍՊԸ-ի լրացուցիչ գրության 3-րդ կետում նշված հիմնավորումը տեղին չէ, քանի որ «Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին

ենթակետի համաձայն օրենքի կարգավորման առարկա են հանդիսանում ոչ միայն դեղերը, այլ նաև դեղանյութերը, իսկ նույն օրենքի 3-րդ հոդվածի 8-րդ ենթակետով սահմանված է, որ «դեղանյութ է՝ դեղեր պատրաստելու կամ արտադրելու համար օգտագործվող դեղաբանական կամ իմունաբանական կամ նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային (մարդու արյուն, արյան պատրաստուկ, մարդկային ծագման այլ նյութեր) և (կամ) կենդանական (միկրոօրգանիզմ, ինտակտ կենդանի, օրգանների մասեր, կենդանիների արտազատուկներ, տոքսիններ, հանուկներ, արյունից ստացված արտադրանք, կենդանական ծագման այլ նյութեր) և (կամ) բուսական (միկրոօրգանիզմներ, բույսեր, բույսերի մասեր, բուսական արտազատուկներ, հանուկներ, բուսական ծագման այլ նյութեր) և (կամ) քիմիական (տարրեր, բնական քիմիական նյութեր, քիմիական փոխակերպման կամ սինթեզի արդյունքում ստացված քիմիական արտադրանք, քիմիական ծագման այլ նյութեր) ծագման նյութ»:

«Խաչպար» ՍՊԸ-ի լրացուցիչ գրության 4-րդ և 5-րդ կետերում նշված «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների Միասնական Անվանացանկի» դասակարգումը, ինչպես նաև 6-րդ կետերում նշված մաքսային հայտարարագիրը վերաբերվում են ներմուծման և արտահանման պրոցեսներին, և չեն կարող հավաստել կամ երաշխավորել ձեռք բերվող ապրանքատեսակների որակը, արդյունավետությունը և անվտանգությունը:

«Խաչպար» ՍՊԸ-ի լրացուցիչ գրության 7-րդ կետում նշված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծման մշակմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 10.09.2015թ. N 48-Ն հրամանը վերաբերվում է ախտահանման, նախամանրէազերծման մշակման և մանրէազերծման պրոցեսներին, որոնք բնականաբար պետք է կատարվեն վերոնշյալ հրամանի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված ախտահանիչ նյութերի մեթոդական ուղեցույցների պահանջների համաձայն:

Վերոնշյալ իրավական ակտերից հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ախտահանիչ նյութերի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱԾԱՊՊԶԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերում ախտահանիչ նյութերի Եվրամիության

երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի առկայության պահանջը հիմնավորված է: Այդ երկրներից որևիցե մեկում գրանցվածությունը կարող է երաշխավորել պահանջվող ախտահանիչ նյութերի որակը, արդյունավետությունը և անվտանգությունը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Վահան Վահանյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/124 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 12.12.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.12.2018թ. թիվ ԴՎԱ/5317 գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- 1-ին չափաբաժնով՝ Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ գրանուլաներ-Գրանուլացված, քլոր պարունակող նյութ, որի ազդող նյութը դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղն է, ունի հակաբակտերիալ, հակավիրուսային, հակասնկային ազդեցություն, օգտագործվում է նաև հատուկ վտանգավոր վարակների ժամանակ: Նախատեսված հեղուկ արտաթորանքների ախտահանման համար: Գրանուլաներում ակտիվ քլորի պարունակությունը ոչ պակաս 27%, Փաթեթավորումը՝ 500g գործարանային տուփ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%: Ապրանքները պետք է ունենան. 1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3. Արտադրող

կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատկարարման ժամանակ ներկայացնել արտադրողի (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը:

- 2-րդ չափաբաժնով՝ Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր Բուժ. գործիքների ախտահանման համար նախատեսված, ադիպինաթթու պարունակող հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ օժտված դեզինֆեկցող ախտահանիչ միջոցներ հաբերի տեսքով, հաբի քաշը մինչև 6գ, որի ազդող նյութը դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղն է, յուրաքանչյուր հաբը լուծվելիս անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս 1,75 գրամ, փաթեթավորումը 100 հաբից ոչ պակաս տուփերով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատկարարման պահին ոչ պակաս քան 50%: Ապրանքները պետք է ունենան. 1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր: 4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողի (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը:

- 3-րդ չափաբաժնով՝ Օրթոֆտալատ ալդեհիդ պարունակող ախտահանիչ նյութ Endocleans սարքի համար- Բուժգործիքների ախտահանման և բարձր մակարդակի ախտահանման համար: Օժտված հակամանրէային ակտիվությամբ գրամ դրական և գրամ բացասական մանրէների, ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաների, վիրուսների, սնկերի նկատմամբ, որի ազդող նյութը օրթոֆտալատ ալդեհիդն է և պատրաստի լուծույթը պետք է ունենա հակակոռոզիչ բաղադրամասեր: Պետք է երաշխավորված լինի առկա Endocleans սարքավորման հետ աշխատելու համար՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Մինչև 5 և տարաներով՝ 20%-ը 1 լիտրանոց: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%: Ապրանքները պետք է ունենան. 1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր: 4. Պիտանելիության

ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողի (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը:

- 4-րդ չափաբաժնով՝ Սուբտիլիզին բակտերիալ պրոտեազա ֆերմենտ պարունակող վլացող հեղուկ էնդոսկոպիկ սարքերի համար-Բժշկական գործիքների նախաստերիլիզացիոն վլացող հեղուկ, որի ազդող նյութը սուբտիլիզին բակտերիալ պրոտեազա ֆերմենտն է, PH-ը 6.0-12.0, մինչև 5լ պոլիէթիլենային տարայով՝ 20%-ը 1 լիտրանոց: Պետք է երաշխավորված լինի Storz, Olympus, Fujinon, Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից ըստ դրանց մեթոդական ցուցումների՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%: Ապրանքները պետք է ունենան. 1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և՛ որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր: 4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողի (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը:

- 5-րդ չափաբաժնով՝ Ձեռքի ախտահանման հեղուկ-Բուժանձնակազմի ձեռքերի ախտահանման և մշակման հիգիենիկ միջոց: Օգտագործման համար պատրաստի հեղուկ, որը պարունակում է սպիրտ՝ 70%-ից ոչ պակաս, օկտենիդինի դիքլորիդ 0.1%-ից ոչ պակաս, կամ համարժեք հակամիկրոբային այլ ՊԱՅ նյութ և մաշկի խնամքի համար փափկեցնող հավելումներ: Մինչև 1 լիտր պոլիէթիլենային տարայով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%: Ապրանքները պետք է ունենան. 1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ

Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր: 4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատկարարման ժամանակ ներկայացնել արտադրողի (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը:

«Խաչապար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 12.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում առկա՝ բոլոր հինգ չափաբաժինների համար սահմանվել է նույն պահանջը, այն է՝ «Ապրանքները պետք է ունենան. 1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)»: Նման պահանջը խտրական է և սահմանափակում է ԵԱՏՄ արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների հնարավոր մասնակցությունը տվյալ աճուրդին:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ հաշվի առնելով այն փաստը, որ ներկայումս որևէ ախտահանիչ նյութ ՀՀ-ում պետական գրանցում չունի և ներկրման ժամանակ դրանք չեն անցել գրանցման համար սահմանված համապատասխան փորձաքննություն, ինչպես նաև ախտահանիչ նյութերի որակը, արդյունավետությունը և անվտանգությունը ապահովելու նպատակով՝ Աճուրդի տեխնիկական բնութագրերով սահմանվել է պահանջ, համաձայն որի ապրանքները պետք է ունենան՝ Եվրամիության

երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): Սահմանված պահանջի համար հիմք են հանդիսացել՝ «Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետը, ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները» կարգի 2.1 կետը և ՀՀ կառավարության 25.04.2001թ. N 347 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» կարգի 11-րդ կետը: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ նշված իրավական ակտերը փաստում են, այն մասին, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերում ախտահանիչ նյութերի Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի առկայության պահանջը հիմնավորված է:

Բողոքներ քննող անձի այն հարցին, արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կան պետական գրանցում ունեցող ախտահանիչ նյութեր թե ոչ, և՛ Բողոքաբերը, և՛ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեցին, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող ախտահանիչ նյութեր չկան:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները» կարգի 2.1 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար կատարվող գնումների պլանում կարող են ընդգրկվել նաև «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք ունեն արտադրողի երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր և Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում և (կամ) գրանցված են Եվրոպական միության անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կամ Ճապոնիայում:

ՀՀ կառավարության 25.04.2001թ. N 347 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական

գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» կարգի 11-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման նպատակով կատարվող փորձաքննության առավելագույն տևողությունը 180 օր է, բացառությամբ Եվրոպական միության լիիրավ անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ Ճապոնիայում գրանցված դեղերի, որոնց փորձաքննությունն իրականացվում է առավելագույնը 30 օրվա ընթացքում, պարզեցված կարգով՝ առանց լաբորատոր փորձաքննության:

«Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսանմանակների, դեղերի համակցությունների, հոմեոպաթային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման՝ հետ կապված այնպիսի

չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

- 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

- 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

- 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

- 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց

դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով բոլոր ապրանքների համար սահմանվել է միևնույն պահանջը, այն է՝ «Ապրանքները պետք է ունենան. 1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):»

- Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող ախտահանիչ նյութեր չկան:

- Պատվիրատուն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանելիս առաջնորդվել է ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները» կարգի 2.1, «Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ և «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.04.2001թ. N 347 որոշման 11-րդ կետերով:

- «Դեղերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ, ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները» կարգի 2.1 և «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.04.2001թ. N 347 որոշման 11-րդ կետերը վերաբերելի են դեղերին, իսկ Աճուրդի հրավերով գնման ենթակա առարկան ախտահանիչ նյութեր են:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն՝ ախտահանիչ նյութի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով «Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված

ապրանքները» պահանջը սահմանելով, խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար » ՍՊԸ-ի կողմից 12.12.2018թ ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ